ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-18/7 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան **«26» նոյեմբերի 2018թ.**
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման պատասխանատու՝ **Ա. Մեսրոպյան**:

Հանձնաժողովի անդամներ՝
ԱԻՆ ֆինանսատնտեսագիտական վարչության ֆինանսաբյուջետային բաժնի պետ՝ **Ա. Մկոյան**,
ԱԻՆ իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ՝ **Հ. Ծատուրյան**:

Հանձնաժողովի քարտուղար՝
ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության փորձագետ՝
Ա. Մարգարյան:

ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-18/7 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց ձեռքբերվող ապրանքների նախահաշվային գները մեկ թվով արտահայտված՝

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	նախահաշվային գինը /դրամ/
1	Բենզին ռեգուլյար	9 999 600
2	Դիզելային վառելիք ամառային	9 999 900

1. **Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**
«ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-18/7» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի հայտերը էլեկտրոնային www.eauction.armeps.am համակարգի միջոցով բացվել են Արտակարգ իրավիճակների նախարարության շենքում ք.Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ., Ա.Միկոյան 109/8 հասցեում, նոյեմբերի 26-ին ժամը 11:00-ին:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/ և գտնվելու վայրերի հասցեները.**

N/N	Մասնակցի անվանումը	հասցեն
1	Սիֆիէս Օիլ Քորփորեյշն ՍՊԸ	ք. Երևան, Պուշկինի 1
2	Ֆլեշ ՍՊԸ	ք. Երևան, Ե.Կողբացի 30

Կողմ՝ 3, դեմ՝ 0

3. Տվյալներ՝ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 3, դեմ՝ 0

4. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-18/7 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի շրջանակներում մասնակիցները ներկայացրել են անհրաժեշտ փաստաթղթերը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0

5. Մասնակիցների առաջարկած գները.

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Մասնակցի անվանումը	Վերջին առաջարկ		
			Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գումար
1	Բենզին ռեգուլյար	Սիփիէս Օիլ Քորփորեյշն ՍՊԸ	7 371 500	1 474 300	8 845 800
		Ֆլեշ ՍՊԸ	7 670 633	1 534 126,6	9 204 759.6
2	Բենզին ռեգուլյար	Սիփիէս Օիլ Քորփորեյշն ՍՊԸ	8 130 000	1 626 000	9 756 000
		Ֆլեշ ՍՊԸ	8 536 500	1 707 300	10 243 800*

*Էլեկտրոնային աճուրդների իրականացումն ապահովող www.eauction.armeps.am համակարգը «Ֆլեշ» ՍՊԸ-ի հայտը 2 չափաբաժնի մասով, ավտոմատ եղանակով մերժել է նախահաշվային գները գերազանցելու հիմքով:

6. Տվյալներ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հարցումներ չեն ստացվել:

7. Հանձնաժողովը որոշեց՝

1. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝

ա) «Սիփիէս Օիլ Քորփորեյշն » ՍՊԸ-ի ներկայացված հայտը գնահատել բավարար և ճանաչել **ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-18/7** ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող:

բ) «Ֆլեշ » ՍՊԸ-ի ներկայացված հայտը գնահատել բավարար և ճանաչել **ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-18/7** ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 2-րդ տեղ զբաղեցնող:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝

ա) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի

կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

բ) ծանուցել առաջին տեղ զբաղեցնող մասնակցին առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով սույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները համակարգի միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 2-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

1. Իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 3-ի.
2. Հայտը ներկայացնելու տարվա և դրա նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը.

2. Հաջորդ նիստը գումարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից տեղեկատվության և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը ստանալուց ոչ ուշ, քան հաջորդ օրը:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Ա. Մեսրոպյան**

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Ա. Մկոյան**

_____ **Հ. Ծատուրյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Ա. Մարգարյան**